



Ծնվել է 1938 թ Գորիսի Բայանդուր գյուղում, 8-րդ դասարանն ավարտելուց հետո սովորել է Գորիսի մանկավարժական ուսումնարանում: Աշխատել է Ծավ և Առաջաձոր գյուղերում որպես ուսուցիչ: 1957-1959թթ անցել է զինվորական ծառայություն: 1960 թ ընդունվել և 1965թ ավարտել է Երևանի Պետական Մանկավարժական ինստիտուտի պատմա-լեզվագրական ֆակուլտետը: Այնուհետև ուղեգրով աշխատանքի է անցել Հրազդանի շրջանի Ալափարս գյուղի դպրոցում: 1970թ տեղափոխել է Բյուրեղավան և աշխատել դպրոցում որպես Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ , այնուհետև ուսմասվար, իսկ 1989թ –ից տնօրեն: Բորիս Բալիշյանը ստացել է բազմաթիվ պատվոգրեր լավ աշխատանքի համար, Կոտայքի մարզպետի կողմից արժանացել է Կոտայքի մարզի լավագույն դպրոցի տնօրեն կոչմանը: Ամուսնացած է ,ունի 3 զավակ: